

զանոնք . և եթէ իրենց թշնամեաց եւ
րեւելն գերութեան երթալու լինին ,
հոն պիտի խրկեմ սուրն որ սպաննէ
զանոնք , և աչքս նոցա վերայ պիտի
դնեմ չարի և ոչ բարւոյ համար (1) ։

Եւ այս բաներս Լուսուած մեր վերայ
կատարեց հաղար տարուան միջոցիս
մէջ , այն ժամանակէն մինչեւ ցայսօր
բանի որ ոչ երգերն և ոչ տաղմու
նէրն կ'երգեմք : Սակայն Լուսուծոյ եմք
ամեն դէպքերու մէջ :

Ի յաջորդն :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌԱՔԻՆԻ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԻԹԹ ՊԱՏԱՆԻ

(Հարուստութեան . տես թիւ 10) :

Ի Ա .

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՁՄԻՏՍ :

Կրթութեամբ նաեւ միտքն ալ կը
կատարելագործուի : Աղբան երկու
սող բան մը միտքդ պահելու համար
որչափ կը տանջուէիր , հիմա գիւրու
սուանց նեղութեան ամբողջ երեւներ
բերնուց կը սերտես ու այնչափ բանի
խելք կը հասցընես . որ մէկը չկրնար ե-
թէ կրթուած չըլլայ , եւ աս ինչո՞ւ .
վասնի զի կրթուելը ես :

Նշմարտութիւնը ճանչնալու հա-
մար , իրաց իրարու հետ ունեցած վե-
րաբերութիւններն հարկաւոր է գիտ-
նալ , հետեւանքները գուշակել , որով
ըսել է թէ պէտք է կրթութեամբ միտ-

(1) Այ՛ն ասպիտակ ի նոցանէն փախուցեալն . և մի
գերծնի ի նոցանէ գերծնալն , Զի եթէ ծածկեցին ի
դժոխս , անտի ձեռն իմ իրարեցէ զնոսա . և եթէ եւա-
նիցեն յերկնս , և անտի իջոցից զնոսա . և եթէ թա-
ղիցեն ի բարձունս Արարելոյ , և անտի յուզեցից և
սուից զնոսա : Եւ եթէ ընկեցին յաչաց խնց ի խորս
ծովու , և անց հրամայեցից վեշտպին խալթել զնոսա :
Եւ եթէ զնոցեն ի գերութիւն առաջի թշնամեաց
խաբանց , և անց հրաման տաց սրբի և սասանեցե-
զնոսա : Եւ հաստատեցից ի վերայ նոցա զայս . որ ի
չարութիւն և ոչ ի բարութիւն : Ան . Բ . 1-4 :

քը կատարելագործուել և իրեն պակա-
սութիւններէն զինքը բուժել : Սոց
պակասութիւններն են Տգիտութիւն եւ
Ախլակ : Տգիտութիւնն է ճշմարտու-
թիւնը ճշանալ . իսկ սխալմունքն է
սուտ բանի հաւատալ : Գաստիարաւ
կութիւնը երկուքին ալ կը յաղթէ , ու
բով ասրագայ տհաճութեանց ստնիւր
կ'առնէ և ասորմ կը պատճառէ : Ըսեն
մը կը կարծուէր որ գիտաւորնէր դըժ-
բաստութիւններու գուշակ ըլլան ,
ու ստի անոնց երեւնալուն պէս կը կար-
ծէին որ ամէն տեսակ ձախորդութիւն
գլխուն պիտի հասնի . դարձեալ կը
կարծէին որ զանգակներն հնչեցնելով
մըրիկը կը դադրի . բայց ընդ հակառա-
կըն անով աշտարակներու և զանգաւ
կատուններու վրայ կայծակ կը զարնէր
չատ անգամ զանգակահարը սպաննե-
լով : Ըսաջ մարդիկ չէին ուղեր որ ար-
դոց պատուաստ ըլլուի (1) , որով շատե-
րն ալ կը մեռնէին , կամ շատերը այ-
լանդակ ու տգեղ կերպարանք մը կ'ու-
նենային : Տգէտը լեցուն է տեւորդաւ
պաշտութիւններով . մեռելներէն կը
վախէ . սգիներէ , խրատիլակներէ ու
կախարդներէ կը տարսափի , և անոնց
վախէն խաղալու համար սուտ ու մուտ
ջերմեռանդութիւններ կ'ընէ , որով կը
բոնքը աւելի կ'անարգէ ու կ'անպա-
տուէ : Տգէտը հանդիպած բաներուն
հետեւանքը մտածելով ապագան գու-
շակելու տեղ , մտքաւոյց ըրած չըն-
նէն ու աստղարաշխներուն ըսածնե-
րէն կ'ուզէ ըլլալիքներն իմանալ . ինչ
պէս նաեւ կը կարծէ որ լքի և ուրիշ
խաղերով բաղդը պիտի չինէ . խաղե-
բաներու և կախարդներու մէջ կ'եր-
թայ կը նստի . ոչ խորդուս իրաւունք-
ները գիտէ , ոչ իրեն իրաւունքները
յարբժլ կուտայ , և ոչ ալ ինքը ուրիշ

(1) Տար երկինք որ երբեք աստղեմ տալաւ սուխո-
քը փարատեր այս նախապաշարմունքը և մարդկային
սեռը ազատէր : (Ծան . Օրինակք) :

ներուն իրաւունքը կը յարգէ :

Բնականական նրաւի ամբողջ կ'ու-
նենայ մարդոց բան սովորելով, որչափ նա
բանոր բաներ կը կարգաց գրքերու մէջ :
Հոն երեւելի մարդկանց անուններն
ու ըսած գործքերը կը սովորու . բու եր-
կրիդ պատմութիւնը . ճամբարութիւն
ները . դիպումները . բնութեան ա-
երկրներն երեսը տեսնուած երեւոյթ-
ները . և ինչ որ աշխարհչին մէջ կը հան-
դիպի ամէնը կ'իմանա . ուրիշ տեղ մը
կը կարգաս նարանդ գիւտեր որոնք կը
հարստացնեն զմարդ և գիւրուածիներ
կը սովորեցնեն ստակի և ժամանակի
խնայութեամբ : Աւրիշ տեղ մը կը սով-
րի մարդ՝ թէ ի՞նչ պիտի բնէ ու ի՞նչ
բանէ պիտի զգուշանայ առարկի ու
քաղաքակիրթ մարդու մը պէս ապրե-
լու համար . և երբայ ուրիշ բան չու-
նենար ընելու . իրեն զբաղելու բան
մը կը գտնայ : Չեմ կրնար մէկիկ մէ-
կիկ համբել թէ որչափ մարդը կ'օգ-
տուի ու կը զուարճանայ գիրք կարգա-
լով, միայն թէ աղէկ գրքեր ըլնան . այս
ինքն սովորեցած ցածին գիտնարու ար-
ժանի բան մը ըլլայ ու ըստնին սրտ
կեշտ ու շնորհքով :

Բնաւորներն եղան որ ժողովուրդն
ընկճելու և և խան սրհնդներու համար
անոնց կարգաւ սովորէին արգիւնցին :
Յաւիանտս կայսր Վրիտանեաներուն
ընկճել ուղեւով, ա՛հ, ի՞նչ անօրէնու-
թիւն . թող չեր տար որ ուսմունք սով-
րին . և թէ որ պատգամն օրս թագաւոր
մը կարգաւ գրել սովորը արգիւն՝ (1)
ինչպիսի անգղամ մը չտեսնիր . և ու
հաւաստի շատերը գառախարակութե-
հաւեւէ չըլլալով իրենց կամօքը այս կեր-
պով զիրենք կ'ընկճեն ու կը նուաստա-

ցրեն : Գաղղիա ու Բնդղիա կառա-
վարները մէկ կողմանէ կը կարգան ու
միւս կողմանէ կը սարսնեն որ ճամբար-
մը դայ որ անոնի՝ . դանտականներն ալ
նայեալն դուրս ապաստած միջոցին
կը կարգան . և կօշիկ մարքայները քո-
վերնին օրագիր ունին որպէս զի օրոնք
որ իրենց կօշիկներն փայլեցնել տալու
կու գան . անոնց կարգաւ տան :

Վանի որ ասեննիդ է, սի պա-
տանեակք, սովորելու ետեւէ եզիք .
ծնողքնիդ հիմա ձեր տեղը կ'աշխա-
տին որ դուք ժամանակ ունենայք բան
սովորելու . բայց օր կու գայ որ դուք
ձեզմէ պիտի սկսիք փատուկիլ . և այն
տուն ի՞նչպէս պիտի ուրախանար ե-
րիտասարդութեան միջոց սովորած ըլ-
լալուդ վրայ : Չեզմէ աւելի զի-
տուններուն հետ ընկերացէք . պատ-
շաճ համեստութեամբ ու զածնիդ հար-
ցուցէք իրենց . և ըստնին մարքերիդ
պահեցէք : Տգէտներուն մի վատահիք
որոնք որ առանց զձեզ խաբել ուղե-
լու . կրնան սիտ բաներ հասկըցընել
ձեզի :

Թորոտը կարգաւ գրել ու հաշիւ-
բանել չսովորեցաւ որնոր ըստ ինքեան
ամենքը պարտական են գիտնալու . ու
սով չկրնար փախ տուածը նշանել .
առածը տուածը չգրեր . ուստի կը
մոռնայ . կուրի մը պէս ուրիշներուն
ըստնին ետեւէն կ'երթայ՝ առանց
պատճառը գիտնալու . իրեն երկրին
օրէնքներուն տգիտ ըլլալով չպահէր
զանոնք . իրմէ հեռու ելալի մը թէ որ
հարկ ըլլայ բան մը բռնել . չգիտէր ինչ
կերպով ըսէ . նամակ մը որ առնէ՝
պէտք է որ կարգացընել տալու հա-
մար ուրիշներուն վաղէ . օրով իւր
ծածուկը ուրիշին կը յայտնէ . ինչպէս
նաեւ երբոր հրապարակի մը մէջ հրո-
վարտակ մը կամ ծանուցագիր մը կրա-
ցուած ըլլայ՝ հասկընալու համար ու-

(1) Թեպէտ շինաց անպիսի թաշուոր մը . բայց
դժբաղդարար մեր հայ ազգին մէջ շատ կան կար-
գալ գրել սովորել արգիւնը Վապիւրդներ ու շու-
որմիներ որոնց համար բարձ կամ դարձ կը մաղ-
թէմք : (Տան . Օրէնագիրն .)

րիշի կարօտ է . ամէն վայրկեան կը մահանայ . ու հարկ կ'ըլլայ որ Գլխէն Գլխէն լսէ : Եթէ վրայ կամ կնքահայր ըլլայ , և ոչ իր անուանը կրնայ ստորագրել , մութհաներու և յետկարներու տակ խաչէ մը զատ ուրիշ բան չկրնար գնել . զինուորութեան մէջ թէպէտ սրտով ու քաջ ալ ըլլայ , բայց չկրնար ստորագրել մը հասնել . և ոչ տասնապետ կրնայ ըլլալ , թէպէտ ամենափորձ ալ ըլլայ իրեն արհեստին մէջ , հաշիւ չգիտնարուն գրածաւորաւ որսող նիւթական արհեստաւոր մը կը սեպուի : Օգուկները դպրոց կը խաւրէ , ու ինքն անոնց դրբերէն բան մը չհասկընար և ոչ իսկ կրնայ իրենց բարին բմբռնել . տօնի օր մը եթէ ըլլայ , չգիտեր ժամանակը ինչպէս անցնէ , պանդոկ մը կ'երթայ ստակը կը փրձալընէ ու կը գինովնայ : Արջափ անգամ շատերէն լսեր եմ որ կ'ըսեն . « Եւ , ո՛ր էր ինչ փղայր-իւնան միջոց երկու փաթիլ ճշտապէս սովորեալ եսէն եղած ըլլայի » :

Նաբոլէոն 1812 ին Իտալիոյ թագաւոր եղած միջոցը շատ մը Իտալացի եւ իտալացիներ խաւրեց ինչուան Ռուսաստանն որ երթան պատերազմին . իրենք քաջութեամբ պատերազմեցան , բայց ցուրտն ու սովը բոլոր իրենց բանակը փճացուց . մեծ մասը մեռան , շատերն ալ գերի եղան : Եւ խեղճերուն մէջէն անոնք որ քիչ մը աւելի բան գիտէին , փախանակ անբաններու պէս Արաբիոյ երթալու աշխատելու , ապա ինն անգին աներու մէջ սկսան կարգալ գրել սովորեցնել . ու տասնկով հանգիստ ու պատուաւոր կեանք մը անցնելով կրցան բաւական ստակ ձեռք ձգել . որով ան խելքէ գուրս միթիթալութիւնն ունեցան որ նորէն իրենց հայրենիքը կարենան վերադառնալ :

Եւ շարունակեալ :

Ներկայ ամսոյ մէջ ժառանգացու աշակերտ մի հասաւ Եգիպտոսէն Նաբէնաք անուն որ բաւօրինի բժշկական բնութեան անցնելով ընդունուեցաւ ի ժառանգատուն : Եւ ասիկ Բժշկին վրայադիր :

« Սուրբ Աթոռոյ ժառանգաւորաց դպրոցի Աթոռապետին Տեսուչ Սկիւիշ Վարդապետի միջոցաւ , մեզ ներկայացած Եգիպտացի Իսկնաէր Յովնիսիան աշակերտացու տան և մեկ տարեկան , և ծագիկ հիւանդութենէ պատուաստուած պատուան համար , կը վրայեմ ստորագրուող օր , բնութեամբ ջղային առողջ և քաջակամ է » :

12 Դեկտեմբեր 1867

ՍԱՀԱՊ ԲԵԹԱՅԵԱՆ
ԲԻԺԵՆ , ԷԲԻՍԱԼԻՄ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Տեղւոյս Վսեմ . կառավարիչ Նալիֆ փաշայն շարժութ մի ՚ի վեր ՚ի Յոպպէ կը գտնուի ՚ի պատճառս շինութեան ճանապարհաց . որոյ օր յառաջ լրինուալուն համար կ'ըսուի թէ Յոպպէն ևս պիտի սկսին յարգարել և հասնիլ մինչեւ ՚ի կիրճն , ու բոնդ գրեթէ մօտեցած են Երուսաղէմէ սկսուելով : Յիշեալ կիրճէն մինչեւ ՚ի Ռամլա և անկէ մինչեւ ՚ի Յոպպէ՝ որ 7 ժամուան միջոցէ , բոլորովին աւաղուտ ըլլալով , քարայաւ տակներ պիտի շինուին :

Նորին Վսեմութեան և տեղւոյս Մանրիկայի Զիւստոսի մէջ ծագուած գժտութեան մի տարածայնութիւն կը լսուի հասարակութեան բերանը , որոյ բարեկամական կարգադրութեան համար ՚ի Ղաւնէն հրամաններ եկած են , կ'ըսուի , այսու ամիսայնիւ գեռ գործադրութիւն մի չլինելուն՝ ահամոյ զանց կառնուով յիշեալ գժտութեան պատճառներուն վերայ խօսիլ :

— Սաղի և Յորդանանու կողմերը շնորհիւ բարեխնամ Տերութեան կառարեալ խաղաղութեան մէջ կը գտնուին : Եւ իսկ Տիապի համար կ'ըսուի թէ , Վամասկոս երթալուն , ինչպէս և նախորդ թուով տկարկութիւնը բաժնէնք , Վսեմ . Վալի փաշայն երեք հարիւր անկանոն զօրաց գլուխ կար-